Կ. Քաղաքապետն արքունի,
ԿԱ. Որսապետն արքունի[17],
ԿԲ. Արտաշէսեանն,
ԿԳ. Վանանդացին երկրորդ,
ԿԴ. Ցուլն,
ԿԵ. Վիժանու[18],
ԿԶ. Աքածու,
ԿԷ. Շիրակա Դիմաքսեանն,
ԿԸ. Գազրիկանն,
ԿԹ. Մարացեան տ‹էր›[19],
Հ. Վագրասպու‹նին›[20],
[…][21]»:

---

[17] *Ըստ Ադոնցի (ենթադրաբար)՝* Վարա*սպա*կեան = *«Զօրանամակ»-ի՝* Վարա*զարտի*կեան (Հիւսիսային Դուռն... ԻԲ... - Ճ [(100) մարտիկ արք]) *(տե՛ս էջ 263.* "кн. Вараспакянъ 100"*)*

[18] *Ըստ Ադոնցի՝ վերականգնելի է* Վիժանու‹նի›

[19] *Այս եւ յաջորդ (վերջին) տողի վերջնատառերը կորսուել են թերթի մաշուածութեան պատճառով*

[20] *Ըստ Ադոնցի՝* Վագրաս*պ*ունի = *«Զօրանամակ»-ի՝* Սագրա*տ*ունի (Հարաւային Դուռն... ԺԶ... - Ճ [(100) մարտիկ արք]) *(տե՛ս էջ 264. հմմտ. վաղ երկաթագիր* **Վ** – **Ս***)*

[21] *Այս վերջից կորստի հատուածում, գուցէ, կարող են վերականգնելի համարուել «Զօրանամակ»-ի հետեւեալ 19 փոքր նախարարական տոհմերը, որոնցից մի քանիսը՝ դեռ ըստ Ադոնցի իրաւացի դիտարկման՝ գրչական աղաւաղումներով են.*

Արեւելեան Դուռն... Գ. Աւածացի *[գուցէ, վերականգնելի՝* Արածացի՝ *Այրարատում]* - Մ [(200) մարտիկ արք],

Զ. Մազազացի - Ճ [(100) մարտիկ արք],

Թ. Վառնունի *[գուցէ, համեմատելի՝* Առնայ՝ *գաւառ Պարսկահայքում]* - Ծ [(50) մարտիկ արք],

Ժ. Բաքան *[հմմտ.* Բագան՝ *գաւառ Վասպուրականի հարաւ-արեւելքում]* - Ծ [(50) մարտիկ արք],

ԺԱ. Կճրունին *[հմմտ.* Կրճունիք՝ *գաւառ Վասպուրականի արեւելքում]* - Ծ [(50) մարտիկ արք],

ԺԲ. Գուկանն *[հմմտ.* Գուկանք՝ *գաւառ Վասպուրականի արեւելքում]* - Ծ [(50) մարտիկ արք],

ԺԳ. Պատսպարունին *[հմմտ.* Պարսպատունիք՝ *գաւառ Վասպուրականի արեւելքում]* - Ծ [(50) մարտիկ արք],

ԺԶ. Զանդաղան *[գուցէ, համեմատելի՝* Աղանդ-ռոտ՝ *գաւառ Վասպուրականի արեւելքում]* - Ծ [(50) մարտիկ արք],

ԺԹ. Ասճշնեան *[ըստ Ադոնցի՝* Ճուարշեան՝ *Վասպուրականի հիւսիս-արեւելքում, էջ 321]* - Ծ [(50) մարտիկ արք],

Է. Ցողկեպան *[գուցէ, համեմատելի՝* Ձորք-Կապան՝ *Սիւնիքում, տե՛ս Ա. Յակոբեան, 2009, էջ 282-283]* - Ծ [(50) մարտիկ արք],

Ը. Գրզճունի *[գուցէ, համեմատելի՝* Գորոզու՝ *Սիւնիքում, տե՛ս Ա. Յակոբեան, 2009, էջ 281-282]* - Ծ [(50) մարտիկ արք],

ԺԷ. Սողացի *[հմմտ.* Սոթք՝ *գաւառ Սիւնիքի հիւսիս-արեւելքում]* - Ծ [(50) մարտիկ արք],

Ի. Կինան *[գուցէ, համեմատելի՝* Կէնուազ՝ *ուշ միջնադարեան հարաւային Սիւնիքում, տե՛ս Ա. Յակոբեան, 2009, էջ 282-283]* - Ծ [(50) մարտիկ արք] *(վերջին չորսը կարող էին «Գահնամակ»-ում նաեւ չլինել՝ երկիցս յիշուած* Սիւնեաց *տոհմանուան տակ նկատի առնուած լինելու պատճառով),*

Արեւմտեան Դուռն... ԺԷ. Այծենական - Ճ [(100) մարտիկ արք],

ԺԹ. Վարժնունեան - Ճ [(100) մարտիկ արք],